ԱՔՍԵԼԵՐԱՏՈՐ 28 ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Աքսելերատոր **28** ծրագիրը նախատեսված է առաջնորդների կամ ձեռներեցների համար, ովքեր ցանկանում են զարգացնել իրենց ստարտափ գաղափարը դինամիկ և պրակտիկայի վրա հիմնված էկոհամակարգում:

Մենք նպատակ ունենք զարգացնել ձեռնարկատիրությունը մասնավորապես Հայաստանում ՀՖՀՀ-ի և մեր գործընկեր համալսարանների ուսանողների շրջանում:

Գաղափարի բնույթից կախված՝ ծրագիրն իրականացվելու է երկու ուղղություններով. **3** ամիս տևողությամբ նախա-աքսելերացիոն ծրագիր գաղափարային փուլում գտնվող նորաստեղծ թիմերի համար և բուն աքսելերացիան՝ մնացած ընկերությունների համար, ովքեր արդեն ներկայացնում են պատրաստի արտադրանք կամ ծառայություն:

ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ինտենսիվ նախա-աքսելերացիոն ծրագիր
- Տեղական և միջազգային ստարտափ էկոհամակարգում փորձ ունեցող մենթորների և փորձագետների մեծ ցանց
- Կոնֆերանսներ, սեմինարներ, դասընթացներ
- Հաճելի համատեղ աշխատանքային միջավայրի հնարավորություններ
- Համագործակցության հնարավորություն համախոհ ձեռնարկատերերի և ներդրողների հետ

ԱՔՍԵԼԵՐԱՏՈՐ 28 ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ

- Ձեռնարկատիրական հմտություններ
- Շուկայի ուսումնասիրություն
- Գաղափարների հաստատում
- Մրցակցային առավելություններ և արժեքային առաջարկ (**value proposition**)
- Բիզնես մոդելավորում (Բիզնես կտավի մոդել) և բյուջետավորում
- Բրենդավորում և հաղորդակցության ռազմավարություն
- Ռեսուրսների հայթայթում
- Միջազգային շուկաներում հաջողության գրավական

2021Թ. ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՓՈՒԼԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ

«Շատ ավելի հետաքրքիր է աշխատել մարդկանց հետ, ովքեր իրենք անձամբ անցել են նույն ճանապարհով, որով այժմ անցնում են Աքսելերատոր *28* ծրագրի մասնակիցները, և ովքեր պատրաստ են մեզ հետ կիսվել իրենց ողջ փորձով և հմտություններով»:

Վեներա Հովհաննիսյան, *SOS* թիմ

«Աքսելերատոր *28*-ը բացառիկ ծրագիր է, քանի որ շատ հստակ ու կոնկրետ աջակցություն է տրամադրում ստարտափներին: Այս ծրագիրը կարևորում է ստարտափ թիմերի՝ հենց այդ պահին ունեցած կարիքները և իր օգնությունն ու աջակցությունը, ինչպես նաև նեթվորքն ուղղում է այդ փուլում առկա կարիքը բավարարելուն:
Հենց այսպիսի աջակցություն ենք ստացել Աքսելերատոր *28*-ից, որն օգնում է մեզ լուծել խնդիրը և վստահորեն առաջ անցնել դեպի հաջորդ փուլ»:

Կարինե Հարությունյան, *Areebus* թիմ

ԾՐԱԳԻՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԸ

Աքսելերատոր 28 ծրագրի բարեհաջող ընթացքն ապահովվելու է երեք հիմնական դերակատարների՝ **համակարգողների**, **մենթորների** և **փորձագետների** միջոցով: Վերջիններս աջակցություն են ցուցաբերելու ծրագրի ամբողջ ընթացքում:

Մենթորների և փորձագետների ընտրությունը, նրանց հետ կապը կապահովի **Զարգացման և կազմակերպությունների հետ կապերի բաժինը՝** հիմնականում նախապատվությունը տալով էկոհամակարգում փորձառու մասնագետներ ունեցող իր գործընկերների, ինչպես նաև ՀՖՀՀ-ի շրջանավարտների ցանցին:

1

ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐ

ՀՖՀՀ Զարգացման և կազմակերպությունների հետ կապերի բաժինն Աքսելերատոր 28 ծրագրի համակարգողն է և միջնորդ օղակ ծրագրի բոլոր շահագրգիռ կողմերի՝ մասնակցող թիմերի, մենթորների, փորձագետների, նվիրատուների, գործընկեր համալսարանների համար և **իրականացնում է հետևյալ գործառույթները՝**

• Մշակում և իրականացնում ՀՖՀՀ Աքսելերատոր 28 ծրագրի ռազմավարությունը,
• Մշակում գաղափարների ընտրության տարբեր ընթացակարգերը (գրանցման հայտ, ընտրության չափանիշների սահմանում, մասնակիցների ընտրություն, ընտրող հանձնաժողովի աշխատանքների համակարգում),
• Մշակում դասընթացների պլանը և պլանավորում գաղափարների աքսելերացման ծրագիրը,
• Համակարգում մենթորների, բիզնեսի ներկայացուցիչների, փորձագետների, ծրագրի շահագրգիռ մյուս ընտրությունը,
• Կազմակերպում թեմատիկ սեմինարներ և դասընթացներ, որոնք կարող են դրական ազդեցություն ունենալ նախագծերի մշակման և զարգացման վրա,
• Իրականացնում ստարտափներին աջակցող վարչական հանձնարարություններ,
• Խթանում ծրագրի գործողությունները պոտենցիալ ներդրողների մոտ:

2

ՄԵՆԹՈՐՆԵՐ

Աքսելերատոր 28 մասնակիցներն ունենալու են մենթորներ, ովքեր պատրաստ են նրանց առաջնորդել, աջակցել և խրախուսել ծրագրի ողջ ընթացքում: Մենթորության նպատակն է՝

• Օգնել մասնակիցներին բացահայտել իրենց գաղափարների ուժեղ և թույլ կողմերը,
• Աջակցել մասնակիցների առաջնորդական հմտությունների, կարողությունների և գիտելիքների բացահայտմանը և զարգացմանը,
• Մասնակիցներին տրամադրել անհրաժեշտ գործիքներ ծրագրի իրագործմանն անհրաժեշտ առավելագույն կարողությունները դրսևորելու համար,
• Ստեղծել հնարավորություններ հանդիպելու և համագործակցելու հարակից ոլորտների այլ մասնագետների հետ:

Մենթորներից ակնկալվում է՝

• Օժանդակել թիմերին գաղափարների սաղմնային փուլում,
• Պարբերաբար հանդիպել մասնակիցների հետ անձամբ կամ հեռախոսի / տեսազանգի միջոցով,
• Տրամադրել մասնագիտական խորհրդատվություն,
• Կիսվել սեփական ու մասնագիտական փորձով:

3

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ

ՀՖՀՀ-ն ունի բարձրակարգ ղեկավարներից կազմված փորձագետների բազա, ովքեր պատրաստ են իրենց հարուստ փորձը կիսել ապագա առաջնորդների հետ և աջակցել գաղափարների իրականացմանը:

Փորձագետների հետ նախատեսվում են հետևյալ գործողությունները՝

•Յուրաքանչյուր ամիս անցկացնել սեմինարներ և գիտաժողովներ իրենց փորձագիտության ոլորտում,
• Տրամադրել միանվագ մասնագիտական խորհրդատվություն,
• Մասնակցել ընտրական հանձնաժողովի աշխատանքներին,
• Ներկայացնել գործընկերության կամ ներդրումների հնարավոր առաջարկներ:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ **2021**

ՍԵՊՏԵՄԲԵՐ

- Հայտերի տարածում և ընդունում
- Նախնական գաղափարների ներկայացում թիմերի կազմման համար
- Կարիքների գնահատում համակարգողների հետ
- Մենթորների ներկայացում

ՀՈԿՏԵՄԲԵՐ

- Գաղափարների հաստատում և զարգացում
- Պարբերաբար վերապատրաստումներ համակարգողների կողմից
- Սեմինարներ և գիտաժողովներ փորձագետների կողմից
- Հանդիպումներ մենթորների հետ

ՆՈՅԵՄԲԵՐ

- Մրցույթների նախապատրաստում
- Պարբերաբար վերապատրաստումներ համակարգողների կողմից
- Սեմինարներ և գիտաժողովներ փորձագետների կողմից
- Աշխատանքներ մենթորների հետ

ԴԵԿՏԵՄԲԵՐ

- Մրցույթի կազմակերպում
- Խորհուրդներ համակարգողների կողմից
- Սեմինարներ և գիտաժողովներ փորձագետների կողմից
- Աշխատանքներ մենթորների հետ
- Մրցույթ և հաղթողների ընտրություն

ԾՐԱԳՐԻ ՕՐԱՑՈՒՅՑ

22 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Ծրագրի երկրորդ փուլի մեկնարկի վերաբերյալ տեղեկատվության տարածում

9-14 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Ծրագրին դիմելու վերջնաժամկետ

1-10 ՀՈԿՏԵՄԲԵՐ

«Գաղափարների հանդիպում» (Idea Dating) օրվա կազմակերպում և հանձնաժողովի անդամներին ներկայացում (pitching)

ՀՈԿՏԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

Թիմերի համար նախատեսված ծրագրային դասընթացներ

6-20 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Մասնակիցների և գործընկերների կողմից ծրագրի ամփոփում և գնահատում, արդյունքների ներկայացում

20-23 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Ծրագրի ավարտական օրվա (Demo Day) նախապատրաստում և կազմակերպում

acc28@ufar.am

www.ufar.am